







# Կանխավճարի աջակցություն

մինչև **$350,000**

## ReCoverCA տուն գնողների աջակցություն

ReCoverCA Homebuyer Assistance (DR-HBA) ծրագիրը տրամադրում է մինչև $350,000 կանխավճար և գործարքային ծախսերի օգնո թյո ն՝ ցածրից միջին եկամո տ ո նեցող այն տնային տնտեսո թյո ններին (տանտերերին կամ վարձակալներին), որոնք տո ժել են Կալիֆոռնիայո մ 2018 թվականներին դաշնային հայտարարված հրդեհային աղետներից: Նպատակն է օգնել այս անհատներին և ընտանիքներին տեղափոխվել և տո ն գնել հրդեհի բարձր կամ շատ բարձր ռիսկային գոտիներից դո րս:

Ծրագիրը նախատեսված է լրացնելու այն մատչելիության բացը, որը գոյանում է այն տարբերության պատճառով, թե ինչ կարող է դիմորդը վճարել առաջին հիփոթեքային վարկի համար, և որքան արժե գույքը: Ուղղակի օգնությունը երկրորդ հիփոթեքային վարկի ձևով է, որն անհատույց է՝ հինգ տարի սեփականության իրավունքի պահպանման և բնակության դեպքում:

### Իրավասու վարչաշրջաններ

Եթե Ձեր հիմնական բնակավայրը (սեփական կամ վարձակալած) ստորև նշված աղետների ժամանակ գտնվում էր հետևյալ աղետի օգնության գոտիներում, ապա Դուք կարող եք որակավորվել ReCoverCA տուն գնողների օգնո թյան ծրագրին:

<u>2018 թ. որակավորվող աղետի գոտիներ՝</u> Բյո թ, Լեյք, Լոս Անջելես և Շաստա վարչաշրջաններ:

### Դիմորդի մասնակցության իրավունքը

- Ընտանիքի եկամտի սահմանաչափերը պետք է համապատասխանեն HUD-ի սահմանած ցածրից մինչև միջին եկամտի պահանջին (HUD տարածքի միջին միջին եկամտի 80% կամ ավելի ցածր եկամուտ)
- 640 կամ ավելի բարձր վարկային միավոր:
- Պարտավորության/եկամտի առավելագույն հարաբերակցությունը՝ 45%:
- Պետք է ավարտի 8-ժամյա առցանց դասընթացը տուն գնողների համար:
- Պետք է տուն գնի Կալիֆոռնիայում՝ հրդեհի բարձր կամ շատ բարձր ռիսկային գոտիներից դուրս:

### Զանգահարե՛ք այսօր կամ սկե՛ք

* Այս թռուցիկը պարունակում է տեղեկատվություն ընդհանուր ծրագրի մասին. այն վարկի երկարաձգման առաջարկ չէ, ոչ էլ՝ փոխառություն տալու պարտավորություն, և ենթակա է առանց ծանուցման փոփոխման: Ծրագրի վերաբերյալ ամբողջական ուղեցույցները, վարկի դիմումները, տոկոսադրույքները և տարեկան տոկոսադրույքները (APR) հասանելի են GSFA-ի մասնակից վարկատուների միջոցով:

ReCoverCA Home Buyer Assistance (DR-HBA) ծրագիրը տրամադրվում է Կալիֆոռնիայի բնակարանային և համայնքային զարգացման դեպարտամենտի (HCD) կողմից՝ համագործակցելով Golden State Finance Authority (GSFA) հետ՝ որպես ծրագրի ադմինիստրատոր: Ծրագրի ֆինանսավորումը հնարավոր է դարձել HUD-ի՝ համայնքային զարգացման բլոկի՝ աղետի գոտիներին ուղղված (CDBG-DR) դրամաշնորհի միջոցով: GSFA-ն պատշաճ կազմավորված հասարակական կազմակերպություն և գործակալություն է:

Հեղինակային իրավո նք© 2026

3005HBA02 02/9/26